Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, յուլիսի 11—ին. Թիֆլիս. № 28.

ՄԱՀՄԷԴ-ԱԼԻ ՇԱՀԸ ՀԱՅԵԼՈՒ ՄԷՋ ՆԱՅԵԼԻՍ.




Тип.-Лит. С. Быхова, Тифлис.

Ա՜յ Ալի, Ալի, Ալի—Բոյդ, միթէ այդ ես եմ. Ես... միթէ նմանում եմ Սուլթան Աբդուլ— [illegible]
Համիդին... Ալլահ. փրկիր ինձ.

## ՍՈՒՏ ԿՈՏՈՐՈՂՆԵՐԸ



Անմեղ Ռիզան կամպանիով ցոյց են տալիս որ լալիս են. որ իզուր Ադանայում հայեր կոտոր-վեցան... բայց այդ լացը նրանից է, որ իրենք սուտ էին կոտորելիս եղել, և աչքերը արցունքոտել է։

## ՖԵԼԵՑՏՕՆԻՍՏ ԼԵՒԱՆ ՂԻՖԻԱՆԻՆ



որ թափլում է մին «Тиф. листокъ» և մին «Закавказье» խմբագրութեան տաշ։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ"

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Պուշկինսկայա փ. № 1

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ՆՐԻՑԵԱՆ

Յուլիսի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 3 րուբլի, իսկ նաղդ՝ 2 ր. 50 կ.

Մեր կիսամեայ բաժանորդներից խնդրում ենք բաժանորդագները շուտով ուղարկել, որպէս զի յուլիսի 1-ից թերթը կանոնաւոր հասցնենք իրենց.

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ"

Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ՕՐԱԹԵՐԹԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Առաջնորդող յօդւածներ, ներքին տեսութիւն, գաւառական կեանք, թղթակցութիւններ, քրօնիկ, արտաքին տեսութիւն, առևտրա-արդիւնաբերական բաժին (բորսա և այլն). աշխատաւորական կեանք (աշխատանքի բորսա). մամուլ, թերթօն (գրական, քաղաքական, իրաւաբանական, մանկավարժական և այլն). թատրոն և գեղարւեստ, մատենախօսութիւն, դատաստանական, նամակ խմբագրութեան, յայտարարութիւններ և տեղեկատու.

**ՍԵՓԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

Օրաթերթը հրատարակւում է յուլիսի 5-ից (ամէն օրւայ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ յուլիսի 5-ից մինչև տարւայ վերջը 4 րուբլի, 3 ամիսը 2 ր. 50 կ. ամիսը 70 կ.: Արտասահմանի համար մինչև տարւայ վերջը 6 րուբլի.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты «Сурандакъ»

Խմբագիր-հրատ. Աստ. Նրիցեան.

Հրատարակիչ՝ Գէորգ Չիլինգարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ.

## ՇԱՀՆ ԷԼ ՆԸՆԳԱՒ

Շահն էլ նընգաւ. Նրա գլուխն էլ կերան ու հիմի նա էլ շահ չէ, էստուր եղնէն նա համշարի Մամէդ Ալի է.

Աշխրքի վրէն մէ բան չկայ, վոր վերջ ունենայ. էսօր թաքաւոր, էքուց կախնաւոր, էսօր հարուստ, էքուց աղքատ դառօ, ա՛յ, այ թէ ինչ է ասում յաւիտենական ճշմարտութիւնը.

Ջէն բազմաց, կօսէ, ձէն Աստուծոյ է, կօսէ.

Սա ինչի՞ են ասի, չունքի էստի էդ խուաքիրը պօլիտիկուրի բաներու գօրութին ունէ.

Խիկար իմաստունը ասել է՝ խելքը լաւ բան է, կօսէ, թէ վոր լաւ կօլօփի մէչն է, կօսէ.

Ո՞վ է Խիկար իմաստունը.

Աստուծ վուչ գիդի հարցնուղի գլուխը, ես ինչ գիդիմ թէ ով է. համա էրեւում է, կօճէրիցը, վոր ինքն էլ խելքը կօլօփներու մէչն է էլի պահելիս.

Ու լաւ էլ է արի.

Հիմի կան մարթիք, շահիր, սուլթաններ, իշխաններ ու գեներալներ, վոր իրենք իրենց համա լաւ-լաւ անկրութեն են ապրում, պալատներ են շինել տալի, թւանքներ, զարբազնէք, բոմբեր ու ծաղիկներ, վարթեր ու սոխակներ, կանարէյկէք ու աղաւնակներ են պահում իրենց օսկէ պալատներու մէջ, քէփ է, վոր քաշում են օր ու գիշեր ու խելքի համա կի՝ մէ թումանն չեն ծախսում, մէ լաւ կօլօփ չեն շինել տալի, վոր խելքը անդիր չմնայ ու չկորչի.

Բունութին ինչ է, բունութու համա վաղւայ մարթիքը էրծթէ ու օսկէ կօլօփներ էին շինում.

Հիմի, հիմի խելքը թողել են անդիր ու էսու համա էլ վունց գին ունէ, վունց դադրը, էսու համա էլ վերի էտաժումն է պահւում, առաջ պադւալներում էլ էր ըլում.

Մամէդ Ալի շահը, վունց վոր պարսիկ, խելօք մարթ էր, համա չունքի խելքը էն թաւուր բան է, վոր խանգիսխան փաթերակներ էլ գիդի, էսու համա էլ խելքին չէր գօռ ուտից, իժում էլ քամու ու էսօր էն դուս էկաւ, վոր ամենից աղաք իրա խելքեմէն ինքը փռաւից.

Մամէդ Ալի շահը խառակ վոր զրկւից.

Կու զժւէր իփ վոր խելք ունէր, բա ինչ կուլէր.

Արա ինչի՞ չեն զժւում էնդունք, ձեր ճանանչներեմէն, մեր խմբագրներեմէն, հայ գրողներեմէն, մեր ակտեօրներեմէն, վարժապետներեմէն ու վաճառականներեմէն, հ՞ը, ինչի՞ չեն զժւում, չունքի խելք չունին.

Մարթ վոր ասում է, թէ փուղ կօրցրի, հալբաթ ունեցել է, վոր կօրցրել է, վոր չունենար ինչ կու կօրցնէր.

Էանց էլ խելքն է. Մամէդ շահը ունեցել է. իժում լաւ չէ պահի, իրա փախածին կուռ չէ տալի, ջուր չէ խմացրի. հով չէ արի ու էտու համա էլ, խելքն էլ տեհել է, վուր վունց մէ խեր չկայ, վիր է կացի ու իրան-իրան գուս է էկի գլխաձէն ու կորել է։

Մա՛շ։

Միր ճանանչներու մէջ քանիսի անումը գուղիք տամ, վուր էանց ըլին։

Արա էս սահաթիս մէ լաւ իշկցէք, թէ ձիր ու միր համփաններեմէն ինչ զդամ մարթիք կան, վուր խելքին չին մաիկ տալի ու վիրչը իրենք ին փուշմընի։

Ա՛յ խուսկի գէլիշ, Սուլթան Աբդուլ Համիդը, Օրմանով սրփազանը, Սուրէնով Գէուրք տիրակալը, Սպանդար Սպանդարովը, սա պակաս խելուքն էր, մէ փուխս կէր. վուր սա խելքը փթերով էր բաժնում մուրթա, ով ինչքան կուզեր կու վիկալէր, ու վիկալան եաղիրը էնդդամ, վուր խիղճի համա մէ դրօշի էլ չըթողին։

Բա՛ս, էս ինչևմէն է։

Էս էնդուրմէն է վուր, մենք խիլքին շատ էլ զօռ չըփիտինք տայ։

Մամէդ Ալի շա՛հը, Սուլթան Աբդուլ Համիդի համզը թումաքնիր, զարբազնիր. թուր ու խանջըներու վրայ ուփրօ շատ ամաղ թափից, քանց թէ խիլքի վրեն, ու ինչ էլաւ։

Վունչինչ։

Ա՛յ էշմիաձնի միաբանութինը, մէ ջէր էլա տեհա՞ք, վուր խելօք մարթու պասխի տար, խելօք մարթու պահէր մենձարէր, չէ. ու էտու համա էլ էշմիաձինը իրա փառքից ընկաւ։

Միր պօպուչխաինիրը մէ ջէր էլա էնենց բա՛ն արին, վուր խիղճ վարժապետներին, տեսուչներին պահէին, չէ. ու էտու համա էլ միր շկօլէքի տղերքն ու աղջկերքը փչացան։

Արա Ծննովի շկօլի խաօրիէն խօ գիդի՞ք իփ վուր պապուչխաինիրը Սարգիսովի տղա՛ Լեւոնին բրակեցին։

Ո՞վ ուփրօ ճտաւոր, շկօ՛լը, թէ Սարքիսովը։

Սարքիսովին իժում մինձ տղի ուծին, թէկի մէղ դօղ էրկու հարիր պտէր տանայ, հիմի հինգ հարիր թուման տնուրուղ ունէ։

Ու էտ է միզեղը, վուր հիմի խելօք մարթը իսկի չի ուզում անխիլքներու հիդ աշխատի։

Ա՛յ, հիմի ինձ վիկալէք, ինս, իս ճղ իմ։

Վա՛, զանա ինձ չիք ճանչնում, վուր հարցնում իք։

Հիմի ինձ վուր սուլթանը, ան շահը բարովագիր զրգին ու տային թէ՝ Գասպար, իմացել ինք քու խիլքի զօրութինը, մաքի պէյծառութինը, գլխի քաչալութինը. զուրձի չնուրհալութինը ու ինչ գիդիմ, էս թաւուր ազիզ մաղիզ խուսկիր, ու էտու համա էլ խընթրում ինք, վուր վիկենաս ու գէմուդէմ ան Սոսամբօլ, ան Թէյրան գաս ու միր նազիր վեզիրը ըլիս, չունքի քու վրէն, (իմ վրէն, դուք ձիգ համա չգիդենաք Աւարքեյով Ամբարցումի թաւուր. սա մէ խաախաթ ունէ, ուրիշին վուր գովում ին, հէնց գիդի թէ իրա վրէն ին տաում) մինձ ումիկ ունինք, ու թէկի զուրսա, բաս վիկաց ու գէմուդէմ Թիֆլիզի միր կօնցուլներեմէն վիկալ ճամփու խարջ հազար թուման (իս պակաս չիմ կանայ գնայ) ու գէմուդէմը Թէյրան, ան Սոսամբօլ շտապի. չունքի տանց քիզ վունչինչ չինք կանում անի, ու քիզ էատի համ թաղաղան կու փաակինք, Մահմէդի զակօնով մէ քանի զուժին կնիկ կուտանք, համ լաւ տնըրուղ, համ լաւ քէփ ու պաշտուն ու էս թաւուր մազալու մասալէք. Ի՞նչ իք գիդում, իս դարու կօնիմ, կեհամ Սոսամբօլ ան Թէյրան. չէ, չիմ գնայ, էնդուր ուփրօ վուր՝ «Թաթարալէն» չիմ կանայ թողնի, իժում էնդուր վուր, անխիլք մարթկերանց հիդ դաւի չունիմ ու թէ գնալու ըլիմ, ուփրօ ջալդ Պետրբուրգ կեհամ Ստօլիպինի տիդ, չունքի անում ին, միթօմ սա տաաւկա պիտի տայ կօսէ, ու լաւ էլ կօնէ, միր խուլիգնիրը էլ չին կանայ իրա վրէն բանիր խօսէ, շատիր մօզանէ, նրան կադէա անում տայ, չունքի միր Ստօլիպինը վուր մէ օրինաւուր ու խելօք մարթ է, էնթաւուր կադէտ է, վունց վուր իս ցօցիալ։

Հա էն էի տաում, ինչի վրէն էի փիքր անում, ճտամ ուզում էի իմանայ թէ՝ Ամիրաջիբին ուփրօ գօշադ է թէ դաշադ Արսէնը, ան Բարիմը. հա, հէնց էտ էր, իս կօսիմ վուր Закавказіе-ի բէդախտաւր Ամիրաջիբին, խիստ գօշադ դաշադ է։

Արա Արսէնը, ան Բարիմը կանային դվարեցի կուխկին, Թիֆլիզ քախկումը, խալխի մէջ, էլեքտրիչեսկով չրաղդան արած տիղում, լէվօրը շանց տայ. չէին կանայ, կանային Արսէնն ու Բարիմը մէ պաստ մարթու վրէն տրձակի. չէ. նրանք համարդութին կուգիդենային, Ամիրաջիբին կի, էտ անում է ու էտու համա էլ կօսիմ, վուր գօշադ դաշադ է, քանց թէ շատ շատիրը ու դա էլ Սուլթանի ու Շահի թաւուր խիլքին զօռ է տալի, հարազնիրուն փախածին կուռ չէ տալի, չի ջրում, չի խաատկում ու շահի թաւուր մէ գլուխ էն է տաում, թէ ինքը պրօգրեսիստ է, ինքը լիբերալ է. ու վիրչը, զուրձը էն է շանց տալի. վուր դրա գօզլումը խիլքի տիղ դարման է էլի, ձեռին էլ դալամի մազիէր լէվօր, մարթկութենի տիղ էլ պրաւակատօրութին։

Ա՛յ, թէ ինչի իմ տաում, խալխ ինձ լսէ, ինձ մաիկ տու, դուրթ է՝ շատ բան չիս ասիլ, համա շատ կու լսիս, էլի լաւ կուլի, Շահի, Սուլթանի, Ծննովի շկօլի պապուչխաինիրու, Օրմանովի, Սուրէնովի, կնիազ Ամիրաջիբու հանգի տուտուցութինիր չիք անի։

Գասպար [illegible]

---

## ՓՈՔՐԻԿ ԹԻԽՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Գնացի մի օր դիմակահանդէս.
(Գրողը տանի, խայտառակեցայ)
Դիմակներն էին անթիւ ու պէս-պէս,
Ու բաղդի բերմամբ մէկին մօտեցայ.

— Բարև, ասացի. սիրելի աղջիկն,
Ձեզ հետ թոյլ կըտա՞ք մի քիչ... զրօսնել.
— Համեցէ՛ք պարոն, ես ձեզ պէս մէկին
Մի՞թէ կարող եմ ուրիշ տեղ գտնել...

Յետոյ ասացի որ ես կին չունեմ...
Որ ինչ սիրուն է այսօր լուսինը...
Յետոյ էլ թէ քեզ ես շատ եմ սիրում,
Վերջապէս եղիր իմ ամուսինը...

Յետոյ էլ քիչ-քիչ դէպի մի սենեակ,
(Որ խօսքը մեր մէջ, երկուսս էլ մթնում)
Քիչ յետոյ զարմանք... սիրուհու տեղակ
Մի ծանօթ ձայն է ականջիս հասնում.

— Ա՛խ, Վասօ՝ երբէք քո ամբողջ
կեանքում
Այսպէս կարօտով դու ինձ չես գրկել...
— Գրողը տանի, թիւրիմացութիւն,
Սիրուհու տեղակ կնոջս եմ գրկել...

Ս. Բագէն

## ՊՍՏԻԿ ՖԵԼԻԷՏՈՆ

### Գեղարուեստը, մամուլը եւ հասարակութիւնը

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1, Թատրոն.—Սատանի նման (քաղցածութիւնից) միշտ ձեռքը մեկնած՝ ողորմութիւն է խնդրում։

2, Բանաստեղծութիւն.—Նուա ծերացած, թոքախտաւորի դէմքով, միշտ աչքերը դէպի վեր են նայում։

3, Մամուլ.—Կոտր ընկած, գրպանը դատարկ, գրիչը ձեռնափայտ դարձրած, արագ շարժումներով, առոգ-խօսող։

4, Հասարակութիւն.—Դանդաղ շարժումներով, քնոտ աչքերով, շարունակ ննջում է։

Թատրոն. (Հասարակութեանը դիմելով).—Մեր դարում, երբ լուսաւորութեան ճաճանչները շողափայլում են գեղարուեստի բարձրաբերձ գագաթներին, երբ... (շունչը կտրւում է)... երբ հայ բեմը... հայ բեմը տանում է քեզ դէպի վեհ սկզբունքների տաճարը...

Հասարակութիւն (Մի աչքը բանալով).—Հը՞մ...

Բանաստեղծութիւն.—Ո՛վ կոյր ամբոխ, ահա սփռում եմ ոսկեբոյս տաղ. կը բարձրացնեմ քեզ դէպի եթեր, աստուածների որրանում, երկնային մեղեդիների մէջ, դու կը գրկախառնուես յաւերժերգի ոգուն...

Հասարակութիւնը. (Միւս աչքը բանալով).—Հը՞մ...

Մամուլ. (Տորքացած).—Եւ իմ գրիչը ես կը թաթախեմ արիւնով, կշանթեմ, կը զարթեցնեմ քեզ դարաւոր քնից, կը տանեմ քեզ յառաջդիմութեան շաւղով...

Հասարակութիւնը.—Հը՞մ...

Թատրոն, բանաստ., մամուլ (միասին).—Ինչու ես հ՞ըմ անում։

Հասարակութիւն.—Ինչ անէք չանէք, առանց իմ գրպանի ոչինչ չէք անիլ, ոչ մի տեղ չէք գնալ, ոչ դէպի վեր, ոչ դէպի վար, ոչ եթեր, ոչ մեթեր... (Ննջում է։

Թատրոնը.—(Մահանում է կիսամեռ դրութեան մէջ)

Բանաստեղծութիւնը.—(Ուշաթափւում է)

Մամուլը.—(Կատաղած է լինում, ամբողջ ծոխ կազմը փնտռում է)

Բանաստեղծութիւն. (Ուշքի գալով).—Ըղը... ըղը... զորզ... ես... տաում. ըղը զորզ ես... (Նորից ուշաթափւում է)

Հասարակութիւն.—Հը՞մ... (Խորը քնում է)

(Վարագոյր)

Դիօնիս



## ՎԵՀԱՓԱՌԻ ԳԱՂՈՒՍՏԸ

### ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ

(Նուէր Մինաս Ձերազին)

I

Ի՞նչ թողեց այնտեղ Վէհը—բազմաշխատ,
Երբ լուռ հեռացաւ «դուլուճի երկրից»,
Երբ վառ յոյսերով դէպի Արարատ
Ճանապարհ ընկաւ նա արտասուալից.

Մահացած յոյսե՜ր...
Թառամած բոյսե՜ր...
Անպատուած կոյսե՜ր...
Մարոտած լոյսե՜ր...
Թափուած դիակնե՜ր...
Արեան գետակնե՜ր...
Թաչող գնդակնե՜ր...
Մեռնող զաւակնե՜ր...
Ածխացած հայրե՜ր...
Որդեզուրկ մայրե՜ր...
Պատուաբեկ այրե՜ր...
Բարուքանդ վայրե՜ր...
Ջէնքերի շաչի՜ւն...
Թօփերի թնդի՜ւն...
Ռումբերի պայթի՜ւն...
Շէնքերի ճայթի՜ւն...
Որբեր—անհագուստ...
Այրիք—անապրուստ...
Բո՜չ... թալա՜ն... փախուստ...
Զրկանք ու կորուստ...
Մարդակեր սարդե՜ր...
Անտաշուած ջարդե՜ր...
Հրալափ արտե՜ր...
Ծոփացած զարդե՜ր...
Ժամեր—աւերակ...
Գիւղեր անբնակ...
Տուներ—անբնակ...
Ճի՜չ... կո՜ծ... աղաղակ...
Առեւանգութի՜ւն...
Բռնաբարութի՜ւն...
Կրօնափոխութի՜ւն...
Սրբապղծութի՜ւն...
Ահա պատկերը «դուլուճի երկրին»,
Ուսկից գալիս է հայի սիրելին։

II

Ի՞նչ գտաւ այստեղ Վէհը—յոգնացաւ,
Երբ Ռուստաւանի հողին մօտեցաւ,
Երբ «կեցցէ»-ների տակ—որոտացին.
Նա ողջամբ հասաւ սուրբ Էջմիածին.

Ղօղանջող զանգե՜ր...
Անուշեղ զանգե՜ր...
Մաքրելու ժանգե՜ր...
Անիմաստ ճառե՜ր...
Խճա՜ք... բառե՜ր... բառե՜ր...
Ցաւոյ փքուն սարե՜ր...
Խառնամանց ձիգ շարե՜ր...
Սեպգլուխ գլխե՜ր...
Կապելու խեե՜ր...
Կեղծփետուր թեւե՜ր...
*Տարազգի ձեռե՜ր...
Վարձկան հովիւնե՜ր...
Խառնակ հաչիւնե՜ր...
Անվերջ կռիւնե՜ր...
Ցին ու արծիւնե՜ր...
Օդի ամրոցնե՜ր...
Անշահ դպրոցնե՜ր...
Դատարկ գզրոցնե՜ր...
Կեղտի կալոցնե՜ր...
Անտէր ճեմարա՜ն...
Ընկած վեհարա՜ն...
Վարկաբեկ աթո՜ռ...
Արհիք ազգամո՜ռ...
Կիսաւէր վանքե՜ր...
Անմշակ հանքե՜ր...
Անհաշիւ փողե՜ր...
Աչքածակ գողե՜ր...
Մեղկ առաջնորդնե՜ր...
Անկուշտ յաջորդնե՜ր...
Մահւան զարչ փորձե՜ր...
Դիւական գործե՜ր...
Կուսակցական հարկ...
Անխելք ոչխարք...
Դաւաճանութի՜ւն...
Անարգ մատնութի՜ւն...
Դրամաշորթութի՜ւն.
Մարդագողութի՜ւն...
Եւ խայտառակութի՜ւն...
Ահա՛ այն երկրի պատկերը—դաղիր,
Ուր պիտի գործէ Վէհը—Նորընտիր...

Լիլիպուտ

## ԳԱՒԱՌԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

### Ճշմարիտ կարծիք

Առաջ ուսուցիչը I կիսամեակին օրիօրդ վարժուհուն նկատում է, որ նա առհասարակ անփոյթ է պարապում, ուղղել է հարկաւոր։ Այդ կիսամեակի վերջում ուսուցչի խորհրդով օրիօրդ վարժուհին ս ա ն ի ն է կարդում իր մանկավարժ. պակասը ուղղում։ Մայիս ամսում օրիօրդ վարժուհին առաջ ուսուցչի համար արդէն մի սրբութեան կոթող, մի ձիրքերով օժտւած դաստիարակչուհի էր. Օ՛, սանին, սանին...

II

### Ես հրաժարւում եմ

Միական, բազմամարդ ժողով է։ Խօսում է առաջ ուսուցիչը։ Մեռէք ժողովականներ, կատուեցէք քաղաքացիք. այսուհետեւ ձեր որդիք ձեռքները ծոցը դրած, օրիօրդները սպազգեստ հագած կշրջեն փողոցներում. ձեր դպրոցը, ո՛վ գիտէ, գոյութիւն կունենայ թէ ո՛չ. ձեր օրը ի՞նչ կլինի, որովհետեւ, որովհետեւ, դէ՛ շուտ թաշկինակներ հանեցէք, թաշկինակնե՜ր, որովհետեւ... (ինքը լալիս է) ես, ես, գնում եմ...

Տեսնում է, որ ոչ ոք լաց չեղաւ, խօսքը փոխում է.

—Եւ որովհետեւ ամբողջ հասարակութիւնը խնդրում է հոգաբարձութեան, ինձ պահել, ես մնում եմ... ուռա՛. ուրախացէք. ժողովականներ ուռա՛. իհ, ինչու չէք կանչում, ես սակլիքս պրծայ։

Ցաւութիւն, մենք էլ մեր խելը պրծանք. ասում և դուրս են գնում։

«Զուռնաչի»

## ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐԸ

—Ի՞նչ ես ամբողջ օրերով առանձնանում այս փոքրիկ սենեակում, քեզ համար ոչ թէյ կայ, ոչ հաց, ոչ հանգստութիւն, շարունակ գրում ջնջում, գրում ջնջում. ապա ճղոտում ես ու գամբուղը լցնում թղթի կտորտանքով,—ասեց նախատալով կինը ամուսնուն։

—Թո՛ղէք ի սէր Աստուծոյ, թողէք ինձ հանգիստ, հազիւ էի յաջողեցնում վերջացնել յօդուածս և ամեն ինչ փչացաւ, մոռացա բոլորովին կարգս, մոռացայ թէ ինչ էի ուզում գրել։ Օ՜, Տէր Աստուած, միթէ կարելի է այս տեսակ դատարկապորտների մօտ ապրել և օրաթերթերին էլ յօդուածներ ու նիւթ տալ, գրչակոթը շպրտելով ու ձեռքերը գրպանը դնելով՝ չարացած վեր թռաւ ամուսինը և արագ պտոյտներ սկսեց գործել իր մակարօնի արկղի չափ սենեակում։

—Ինչու ես նեղանում սիրելիս, ես քեզ համար եմ ասում, տես ինչ օգուտ ունես այդ գրուածներից, կամ ով է հետաքրքրւում, ով է կարդում, փաղաքշական տոնով ասաց կինը։

Պարոն յօդուածագիրը, որ կնոջ խօսելու միջոցին քարացածի նման կանգնած ու ձախ կողքի վրայ թեքուած, ականջ էր դնում՝ յանկարծ ոտքը գետնին խփելով գոռաց.

—Յիմա՛ր, ի հարկէ, միայն քեզպէսները չեն հետաքրքրւում իմ յօդուածներին, հազարաւոր մարդիկ են սպասում, այո՛- այո՛ դու ծիծաղում ես, բայց ես հաստատ համոզուած եմ, որ շատերն են հետաքրքրւում իմ յօդուածներով և շատերը երանի տալիս իմանալու, թէ ով է յօդուածագիրը։ Իսկ դո՛ւք, դո՛ւք, մ՛է, թողէք, թողէք, ապա թէ ոչ... դուք ինձ կը խելագարեցնէք...

Կինը փնթփնթալով դուրս է գնում, ամուսնու սենեակից, իսկ պարոն յօդուածագիրը կրկին նստում է իր տեղը, ձախ ձեռքը ճակատին դնելով սկսում է գրել։ Երկու ժամ գրել—ջնջելուց յետոյ, յանկարծ վեր է թռչում տեղից ու դէպի խմբագրատուն ոչ թէ վազելով, այլ թռչելով իրեն նետում է զգում, խմբագրին բարևում, երկիւղածութեամբ յօդուածը նրա առաջ դնում և ցտեսութիւն առնելով. շտապում գործի։

Երեկոյեան, լրագիրը ձեռքին, ծանր քայլերով, դէպի տուն է գալիս, շարունակ աջ ու ձախ նայելով, իրեն նայող կա՞յ արդեօք, ապա մօտենալով ցրիչներին հարցնում է, թերթը լա՞ւ է ծախւում, ծանօթներին պատահելիս, «կարդացի՞ք իմ յօդուածը» հարցնելով, վերջապէս տուն հասնում։

—Նատաշա, արի այստեղ տես, դու, որ չէիր հետաքրքրւում, ահա, յօդուածս տպել են, ականջ դիր կարդամ, (թէպէտ ութ անգամ արդէն կարդացել էր). լսում ես, կարդում եմ.—«Որքան թաղնուած կայծեր կան մարդկութեան մէջ, որքան տաղանդներ, որոնք առանց երևան գալու կորչում են, որքան...

—Սպասի՛ր, սպասիր, այդ միևնոյն բանը ես այսօր առաւօտեան կարդացի,—ընդհատեց կինը, խանգարելով ամուսնու ընթերցանութիւնը և կանչելով ծառային.—Նիկօ, Նիկօ, բեր այսօրուայ վերմիշելի պարկը, հա, հէնց այս է,—ահա, տեսնո՞ւմ ես, ես առաւօտեան կարդացի այս թղթի պարկի վրայ այդ միևնոյն բանը, ինչ որ դու հիմայ կարդում ես լրագրում, դեռ չես էլ ամաչում ու խաբում ես ասելով, որ քո յօդուածն է։

Յօդուածագիրը կատաղեց և կնոջ ձեռքից խլելով թղթի պարկը, նայեց վրան, քիչ կարդաց, և ճղտելով գոռաց.

—Անխիղճ մանրավաճառնե՛ր, դեռ թերթը լաւ չկարդացուած, արդէն մրգի պարկեր էք շինում, ճ՜, մարդիկ, մարդիկ...

Օսկար

## ՕՐ ՈՒ ԿԷՍ ԽՄԲԱԳԻՐ

Անակնկալ կերպով «Խաթաբալի» խմբագիրը մէկ օրով քաղաքից բացակայեց։ Ոչ մի ցուցմունք, ոչ մի կարգադրութիւն չարեց նա այս շաբաթ լոյս տեսնող համարի մասին, հաստատ համոզուած լինելով, թէ

## ՖԵԼԻԷՏՕ՛Ն

### ՆԵՒՐԱՍՏԵՆԻԿԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Ա.

—Ինձ չէ՞ք ճանաչում,—մօտենալով ինձ հարցրեց զբօսավայրում մի տիկին։

Սև աչքերով, որոնց մէջ ցաւի շեշտերով թախիծն էր գրուած։ Թաւ, սևորակ յօնքեր, որոնք կամարում էին արտայայտիչ ծով-աչերը։ Եւ այլն և այլն։

Ես պատասխանեցի տիկնոջը.

—Ինչպէս չէ, շատ լաւ յիշում եմ։ Եկել էք ամարանո՞ց։

Յանկարծ զգացի, որ վերջին հարցը միանգամայն անտեղի էր, չմտածուած, մի փոքր շփոթւեցի։

Տիկինը սիրալիր կերպով ձեռքը տուեց ինձ ու ցոյց տալով մօտիկ նստարանը՝ նստեց։

Նստեցի և ես։

—Ես կարծում էի, մոռացած կլինիք. յիշո՞ւմ էք մեր ճամբորդութիւնը։

—Այո՛, այո՛, ինչպէս չէ, տիկին,—լռեցի ես շտապով։ Իմ հոգեկան կեանքը ներքին դիպուածներով այնքան աղքատ է, որ կամայ-ակամայ չեմ մոռանում ոչինչ, ոչինչ...

Տիկինը ցած թողեց գլուխը նազելիօրէն։ Քիչ առաջ նա նայում էր շեշտակի աչքերիս—ուղիղ աչքերիս մէջ։

Ես զգացի, որ այդ բացատրութիւնն ես անտեղի էր։ Ի՞նչ կարիք կար ներքին աշխարհի յուզումներ ու խնդիրներ առաջ բերել մի խիստ պարզ հարցի պատասխանելու համար։ Դուցէ նրան բնաւ հետաքրքրական կամ նոյն իսկ ցանկալի չէ լսել այդպիսի մտերմական փափուկներ։ Ո՞վ եմ ես նրա համար։—Մի պատահական ծանօթ, մէկը շատերից։ Ուրիշ ոչինչ։

Օ՜, անմտութիւն, անմտութիւն,

Տիկինը տեսնելով որ լռում եմ՝ գլուխը դանդաղօրէն ու հանդիսաւորապէս բարձրացրեց. նորից սևեռեց հայեացքը ճիշտ աչքերիս մէջ։ Նա նկատեց շփոթմունքս, աւելին՝ տարակուսանքս ու ժպտաց. ես կորցրի ինքզինքս։

—Յիշում եմ, յիշում. այն ժամանակ ես դեռ երեխայ էի, սովորում էի դպրոցում,—պատասխանեցի ես նրա առաջեան հարցին՝ վերի պատասխանս անպէտք գտնելով։

Բայց վերջին պատասխանս նոյնպէս դուր չեկաւ ինձ։

Ի՞նչ կարիք կար հասկացնելու տիկնոջը, որ ես հիմիկ երեխայ չեմ։ Իբր թէ այն ժամանակ միայն երեխայ էի, իսկ այժմ-օ, այժմ, լսեցէք այլևս երեխայ չեմ։ Ի՞նչ հարկաւորութիւն կար այդպիսի յայտարարութեան, մինչդեռ տիկինը պարզապէս տեսնում է իրեն նստած մի հասակաւոր երեխայի առաջ, որ ասելիքներն անգամ չի կարողանում ձևակերպել, քիչ ու միչ տանելի կերպով։

—Ես այն վարարած գետը չեմ կարողանում մոռանալ. փրփրոտ ալիքները մինչև այժմ կանգնած են աչքերիս առաջ իրենց ահաւոր տեսքով,—ասաց տիկինը՝ ծառից մի տերև կտրելով։

—Ձեր ամուսինն էլ այստեղ է։ Յիշո՞ւմ էք, գետից անցնելիս ինչպէս էր նա ծածկում թաշկինակով ձեր երեսը, որ չնկատէք ալիքների խելագար վազքը։

Տիկինը լռեց մի րոպէ։ Ինձ թւաց, ամուսնու անուան յիշատակումը դուր չեկաւ նրան։ Ես զղջացի, որ խօսակցիս դժկամակութիւն պատճառեցի՝ յիշեցնելով մի անդուրեկան բան։ Ու զգացի ցաւագինօրէն, որ այդ առածս նոյնպէս անտեղի էր, ինչպէս և նախկին բոլոր ասածներս։

—Այն օրից ի վեր ես ձեզ չեմ մոռացել.—ասաց տիկինը մի խորհրդաւոր և երկար հայեացք նետելով դէմքիս, առանձնապէս շեշտելով «ձեզի» վրայ։

Դա ինձ համար մի անակնկալ էր։ Ես այնքա՛ն վախենում եմ այդ տեսակ մերկացումներից։ Բայց վախենում եմ հետևանքների նկատմամբ. մինչդեռ նրանք խրախուսում են ներշնչում ինձ, բազէական յաղթանակի հպարտութեան հաճոյքով. կնոջ սրտից բռնելու ցանկութիւնն է խօսում իմ մէջ անզսպելիօրէն։ Կանացի այդօրինակ ազդերից յետոյ՝ ես ռոմանտիկ հերոսի դերի մէջ եմ մտնում, եթէ միայն պայմանները նպաստում են, միևնոյն ժամանակ խորապէս համոզուած, որ դերս մինչև վերջին «կեցցէն» չեմ խաղալու։

—Միթէ,—պատասխանեցի ես քաղցրաքաղցր ժպտալով և պարզած հայեացքս սևեռեցի նրա կաս-կարմիր շրթունքներին։ Ու

Գլուխս տարարերցնում էի մտածելով առաջնորդողի համար նոր նիւթ գտնելու մասին, երբ յանկարծ դուռը բացւեց և խմբագիրը ներս մտաւ, Կալանաւորւածի հաստատուներթողը ձեռին։

Նրա օրւակիւսայ բացակայութիւնը որբտանց ներեցի։

ՄԻԼԻՕՆԵՐ

---

## ԴԻՍԻՑ-ԴԻ՛ՆԻՑ

—Ինչու են հոկտեմբերեաններն այսպէս դուրս գալիս իրանց կաշւից։

—Նրանք ուզում են պորտֆէյլներ շինել դրանցից։

—

Հանդիպելիս

—Մեր խեղճ Արամ Ղարաբաղովիչին չի յաջողւում Է՛լի։

—Ի՞նչ է պատահել որ։

—Առաջին անգամ իւր կեանքում առաջարկութիւն արաւ...

—Եւ մերժեցին։

—Ընդհակառակն. ամին իրանց լիակատար համաձայնութիւնը։

Հոգեհանգստի ժամանակ.

—Ինչու նորին պայծառափայլութեան աչքերը մանէթներով ծածկել են։

—Սովորութեան համաձայն. կենդանի ժամանակն էլ նրա աչքերը փողերով էին փակւում։

Հարցաքննութեան ժամանակ.

Հարցաքննողը.—Ի՞նչ բան է խարէութիւնը։

Քննւողը.—Եթէ դուք, պարոն պրոֆեսոր, հարցաքննութեան ժամանակ ինձ կը տապալէք՝ դա կը լինի խարէութիւն։

Հարցաքննողը.—Ի՞նչպէս թէ։

Քննւողը.—Հենց այնպէս։ Երբ մէկը օգտւում է մի ուրիշի անգիտութիւնից՝ նրան ֆնասելու համար՝ քրէական օրէնսգրութիւնը այդ գործողութիւնը անւանում է խարէութիւն։

Ախալցխայի ծխական Դպրոցների Հոգաբարձութիւնը։

Հոգաբարձ.—Պարոններ, եկող ուսումնական տարի ցանկութիւն ունէ՞ք պաշտօնավարելու մեր դպրոցներում։

Ա. խումբ ուսուցիչներ.—Ցանկութիւն ու էն էլ ինչպէ՜ս. լրագրութեան մէջ խայտառակւելուց յետոյ, էլ ո՞վ կընդունի մեզ. մեր գնանք։

Բ. խումբ ուսուցիչներ.—Ինչպէս երեւում է, մեր դէմքերը դուր չեն եկել հոգաբարձութեան. ինչ օրերի ենք հասել։

Սանդ Մախաթովիչ

---

## ՀԵՌԱԳՐՆԵՐ

Մեր սեփ. գործակալութիւնից

Թէհրան 1 յուլ.

Այսօր առաւօտեան նամազի ժամանակ, շահը հրամայեց իրա հաւատարիմ նաւատորմը դուրս բերել և բախտիարներին ու ազգայնականներին իրանց բոլոր պաշարներով ջրահեղձ անել։

Թէհրան.—Սեփահդարը ինքնագիր բարեագիր ուղարկեց շահ Մահմէդ-Ալիին, Ղարաբաղցի Եփրեմը՝ սուլթան Աբդուլ-Համիդի վերջին օրերի պատմութիւնը։

Թէհրան 4 յուլ.

Շահը չնայած այն թախանձանքին ու սիրուն, որ ազգաբնակութիւնը տածում էր դէպի իրան անձը, այնուամենայնիւ հրաժարւեց. և որպէսզի չստիպէին հակառակ իր կամքին թագաւորութիւնը շարունակել՝—երդւեց զուրանի վերայ որ հաւատարիմ մնալով «կանոնը էստասիին»—այնուամենայնիւ թողնելու է իր պաշտօնը։

Ասաղանին, յեղափոխականները, Սաթար՚խանն ու Ասաթը և խեղճ ու կրակ ռայեաթը, այսօր ադի արցունք թափելով, միայն աղաչում պաղատում էին Մահմէդ-Ալիին յետ վերցնել իր հրաժարականը։

Շահը պատասխանեց, եթէ սուլթան Աբդուլ-Համիդն էլ կը խոստանայ կրկին Ելդըզ-քեօսկ վերադառնալ, այն դէպքում միայն կը համաձայնւի։

Կ. Պօլիս.—Թէհրանից օր ու գիշեր հեռագրներ են տեղում Սալօնիկ, Ալաղինի պալատը Աբդիւլ-Համիդին, խնդրելով շահի խաթրը չկոտրել և նորից թագաւորել սուլթանների մայրաքաղաքում։ Համիդը կտրականապէս հրաժարւում է. ասում է այստեղ աւելի լաւ կարող եմ թաշխադահութեամբ զբաղւել, քան թէ Պօլսում։

Թէհրան 5 յուլ.

Մահմէդ-Ալին կրկին երդւեց հաւատարիմ մնալ սահմանադրութեան։ Նոր շահն-շահ Ահմէդ-Միրզան մի մեծ ճառ խօսեց յեղափոխականների մատուցած ծառայութեան վերաբերեալ գահին և հայրենիքին։ Ասաց, որ ինքը բոլորովին յուրջ համարում է իւրերի դրութիւնը և անմիջապէս կաշխատի Դարէհների, Կիւրոսների, Նադիրների և Շահ-Աբասների թագի ու գահի փառքը կարճ միջոցում նորից վերականգնել։

Բեռլին.—Տեղական լրագրները ցաւում են, որ երկրի դրութիւնն այդպէս է։

Պետերբուրգ.—Պուրիշկեւիչը կատաղել է. պնդում է որ պառակտող դրութիւն ստեղծւի և քաղցութիւններ առաջանան. Թէհրանից հաղորդում են, յեղափոխականները շատ շատ ափսոսում են, որ Մահմէդ-Ալին հրաժարւեց և այլևս կուռի ու դալմադալի անց ու պատճառ չեն ունենալ բաւական ժամանակ։

---


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Կիրակի օրը յուլիսի 12-ին
Վէրոյց ազնւականութեան պարտիզում
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆԱԼՈՒ

# ՋՔՈՍԱՆՔ

հայերէն լեզւով

**ՄԿՆԻԿ**

Վօդ. մէկ գոր.

Ծաղիկներ, կօնֆետի, բուֆէտ,

Զինւորական մուզիկայի օրկեստր և արքունական թատրոնի լարային գործիքների օրկեստր

ՊԱՐԵՐ

Սկիզբը ցերեկւայ ժամը 4-ին

Զբօսանքի մուտքը 25 կոպ. աշակ. և երեխ. 15 կ.

Ներկայացման տոմսակները 1 ր. 40 կ.




## П Е Р В А Я

художественная хромо-литографія

# С. БЫХОВА

Тифлисъ, Головин. просп. около цирка

Печатаются всевозможныя литографскія работы въ разныхъ стиляхъ.

Также всевозможныя ярлыки спеціально для водочныхъ и винныхъ складовъ и т. п.

ПО САМЫМЪ УМѢРЕННЫМЪ ЦѢНАМЪ

Работы исполняются лучшими европейскими мастерами

ՅՈՒԼԻՍԻ 15-ԻՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ
ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

# „ՀՈՐԻԶՈՆ"

Դրական հասարակական տնտեսական եւ քաղաքական օրաթերթ

Բաժանորդագինն է Թիֆլիսում և Ռուսաստանում յուլիսի 15-ից մինչև տարւայ վերջը 4 ր. 50 կ.։ Արտասահման (Պարսկաստան, Թիւրքիա և այլն) 5 ր.

Հասցէ՝ Тифлисъ, редак. газеты „Оризонъ"

Լոյս տեսաւ և վաճառւում է

**ՀԱՅԻ ԿՅՈՐ**
**ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ**

Դրական ժողովածու Գր. Զալխուշեանի խմբագրութեամբ. ի նպաստ սովեալ Զէյթունցիների.

Գինն է 2 րուբլի

Պահեստը Գր. Զալխուշեանի մօտ
Ростовъ н. Д. Б Садовая № 174.



**Мамед-Али** шахъ
НАРОДНОЕ ДВИЖЕНІЕ
ВЪ КРАЪ ЛЬВА И СОЛНЦА
*Цѣна 1 рубль*
СКЛАДЫ ИЗДАНІЯ: *Тифлисъ*
КН. ТОР. ГУТТЕМБЕРГ
*Александрополь* ТИПОГР.
„ШИРАКЪ"
АТРПЕТЪ

МАГАЗИНЪ

**Композиція**

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія
шведскаго компо-
зиціон. бѣлья.
→Носится не менѣе
двухъ лѣтъ←
Постоянный боль-
шой выборъ свѣжаго
товара
**Воротниковъ, мани-
шекъ и манжетъ.**
Единственный
представитель для Ти-
флиса и ихъ окрест-
ностей

по фабричнымъ цѣнамъ
переделка въ любой фасонъ безплатно
М. А. КАЛТАГЯНЦА



**ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ**
**„ՊՐՕՎՕԴՆԻԿ"**
ԱՐՏՕՆՒԱԾ
Ամենալաւը Աշխարհում

ԱՆՊԱՅՄԱՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕ-
ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասոնների և ամենալաւ գործածուող նիւթերից



**ԱՐՏՕՆՒԱԾ**

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ**

**ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ**
**ՊՐՕՎՕԴՆԻԿ**




1888

ԱՌՍԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

**Մ Ի Ւ Ն Խ  Ե Ւ  Վ Է Յ Ս**

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ



Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

## «ՄԱԾՈՒՆ ՇԻՆԵԼՈՎ ԱԶԳԸ ՓՐԿՈՒՄ Է»



Ցարգելիներ՝
Ա. Բայանթարը, Աթանասեանը, Էյրանեան գնում են Ղարա-Քիլիսա դատախազութեան

### ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐ



—Ախար խիստ զանցառ տարան էդ վարժապետ-ների՛ է, ասում են թէ փող չեք տալի, կոսէ։

—Ինչ մենք խօ փող չենք կարում, վուր փող տանք. փող ըլի մենք ուտենք։

—Ան թէ չէ, մեզ իրենք են տալի փող, վուր մենք նրանց տանք։

### ՅՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԱՌԱՋ.



—Եւ քանզի մեղուցեալ եմ բանիւ և գործով, գիտութեամբ և անգիտութեամբ, կամայ և ակամայ, խռովեցուցանելով զվիճակային արդիւնս, Տէր, թող ինձ զյանցանս, զի չեմ խմացեալ գինի և օտարաց։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԸ ԲՈԼՈՐ ՏԵՂԵՐՈՒՄ.



—Ախ երանի թէ Վեհափառը շուտ շուտ այցելէ՛ր, գոնէ շաբաթը երկու անգամ։



—Ո՞վ է այդ ֆրանտիկը.

—Закавказье-ի խմբագիրը։

—Ո՜հ, ուրեմն փախչենք այստեղից. նա կարող է մեզ ծեծել, և սպանել որովհետև ցի՛չի տեղ արճանեան է գործածում։

– Ուրեմն նա սոցիալիստ է.

—Ի հարկէ, գոնէ գործը այդ է ցոյց տալիս։